Արձանագրություն N 2
ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-25/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (Armeps) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 18 սեպտեմբերի 2025թ.
Ժամը՝ 16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ս. Նալբանդյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Ա. Գրիգորյան
	Մ. Մելիքսեթյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Լ. Ղազարյան
	Ա. Արտաշյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Այվազյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Ս. Նալբանդյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. **ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-25/13** ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-25/13 ծածկագրով հայտերի բացման մասին
(Ս. Նալբանդյան)

Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1	Hannu-Pro Vilnius	Seimyniskiu g. 1A, LT-09312 Vilnius, Հեռ. +370 52482565, vilnius@hannu-pro.com
2	«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ	ք. Երևան, Դեմիրճյան 36, բն. 8, Հեռ. 094-808-304, ՀՎՀՀ՝ 02671392, rvprojects@gmail.com,
3	ԷՍ ԷՍ ԷՅՋ ԷՅՋ ՍՊԸ	ք. Երևան, Դավիթաշեն 4րդ թաղամաս . 38 շենք ,53 տարածք , Հեռ. 093669257, ՀՎՀՀ՝ 00218923, ,maydakazanjian2020@gmail.com
4	«ՋԻ ՎԻ ԷՆ ՊՌՈ» ՍՊԸ	ք. Երևան, Մարգարյան 2-րդ նրբ., 1/1-27 ,հեռ. 099-33-30-23, ՀՎՀՀ՝ 01296636, gvnllcpro@gmail.com

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին
(Ս. Նալբանդյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում Հրավերով սահմանված փաստաթղթերն առկա են:

Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊ ընկերության՝ Հավելված 1.1-ում Ապրանքի մատակարարման վայրը նշված չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0 :

4. Անհամապատասխանությունները շտկելու մասին

(Ս. Նալբանդյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանության մասին ծանուցել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊ ընկերությանը:

Շտկումները պետք է ներկայացվեն էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, մինչև 22.09.2025թ. ժամը 16:00 ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Նալբանդյան)

ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-25/13 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար հայտերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել 2025 թվականի սեպտեմբերի 22-ին ժամը 16:00-ին ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի.

նախագահ՝	Ս. Նալբանդյան
գնահատող անդամներ՝	Ա. Գրիգորյան
	Մ. Մելիքսեթյան
բացող անդամներ՝	Լ. Ղազարյան
	Ա. Արտաշյան
քարտուղար՝	Ա. Այվազյան